ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 սեպտեմբերի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

119
(3328)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈ՞Ւ ԱԼԻԵՎԻ ՄՈՏ ՉԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին էր ուղղել հարցում՝ փորձելով պարզել, թե Բիշքեկում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ընթացքում արդյոք քննարկվել են Ադրբեջանում պահվող հայ գերիների նկատմամբ հնարավոր խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ ահազանգերը:

Հարցման հիմքում ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի՝ սեպտեմբերի 4-ի մամուլի ասուլիսում հրապարակած տեղեկություններն էին: Սահակյանը, մասնավորապես, հայտնել էր գերիների նկատմամբ ֆիզիկական բռնության, կոտրվածքների, խաչի տեսքով դաջվածքներն այրելու, «Ղուրան» կարդալ հարկադրելու եւ «Աստվածաշունչ» փոխանցելն արգելելու դեպքերի մասին:

«Ժողովուրդ»-ը վարչապետից հետաքրքրվել էր՝ արդյոք այս կոնկրետ տեղեկությունները բարձրաձայնվել են Ալիեւի հետ հանդիպման ժամանակ, ինչ պատասխան է տվել Ադրբեջանի նախագահը, ինչու մինչ օրս չեն վերադարձվում հայ գերիները, եւ արդյոք ՀՀ կառավարությունը պատրաստվում է պահանջել միջազգային անկախ կառույցների ու բժիշկների անարգել մուտքը նրանց մոտ:

Սակայն վարչապետին հասցեագրված հարցմանը պատասխանել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ ըստ էության չանդրադառնալով բարձրացված յոթ հարցերից յուրաքանչյուրին առանձին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ Սահմանադրական դատարանում արդեն «ճամպրուկային» տրամադրություններ են. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ակտիվորեն քննարկվում է ՍԴ նախագահի առաջիկա փոփոխության հարցը: Բանն այն է, որ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի՝ նախագահի պաշտոնում վեցամյա ժամկետը լրանում է 2026 թվականի հոկտեմբերի 12-ին: Այսպիսով՝ մեկ ամսից էլ քիչ ժամանակ անց Դիլանյանը կդադարի զբաղեցնել ՍԴ նախագահի պաշտոնը՝ շարունակելով գործունեությունը Սահմանադրական դատարանում որպես դատավոր: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ ՍԴ-ում արդեն քննարկվում է ապագա նախագահի անունը: Որպես ՍԴ նախագահի հավանական թեկնածու՝ շրջանառվում է Վլադիմիր Վարդանյանի անունը: Միաժամանակ, մեր աղբյուրները չեն բացառում, որ իշխանությունները ՍԴ նախագահի ընտրության հարցում կարող են այլ սցենար ունենալ, եւ մինչեւ հոկտեմբերի 12-ը այլ թեկնածուի անուն եւս կարող է հայտնվել օրակարգում: Բայց դա քիչ հավանական է:

Հովիկ Աբրահամյանի որդու՝ Արգամ Աբրահամյանի ճակատագիրը այժմ կախված է Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Սեւակ Համբարձումյանի որոշումից: Ինչպես հայտնի է, դատավորը մոտ 10 օր ժամանակ է խնդրել՝ որոշելու համար՝ փոխել Արգամ Աբրահամյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը, թե ոչ: Ուշագրավ է, որ Սեւակ Համբարձումյանը Վերաքննիչ քրեական դատարանի այն դատավորներից է, որի վարույթում հայտնվում են հանրային մեծ հետաքրքրություն առաջացրած քրեական գործեր: Մասնավորապես, վերջերս նա մերժել էր «Չաղ Ռուստամ» մականունով հայտնի Ռուստամ Ստեփանյանի վերաբերյալ բողոքը եւ նրան կրկին ուղարկել էր կալանքի տակ: Այս ֆոնին «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է, թե ով է Սեւակ Համբարձումյանը եւ ինչ ունեցվածք է հայտարարագրել: 2021 թվականի սկզբին դատավորի հայտարարագրում առկա է եղել հինգ անշարժ գույք: Դրանցից երկուսը Արագածոտնի մարզի Թալինում գտնվող հողամասեր են, որոնք ձեռք են բերվել դեռեւս 1991 թվականի մարտի 30-ին: Թալինում Համբարձումյանը ունեցել է նաեւ հասարակական նշանակության շինություն՝ 2/4 բաժնային սեփականությամբ, որը ձեռք է բերվել 2012 թվականի ապրիլի 13-ին՝ նվիրատվության եղանակով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ԱԺ նախկին նախագահ, ներկայիս ԱԽՔ Ալեն Սիմոնյանը լրագրողների հետ զրույցում ուշագրավ դրվագ է պատմել Մոսկվայում տեղի ունեցած միջադեպից՝ հայտարարելով, որ Հայկ Սարգսյանի հետ եկած քրեական հեղինակությունը հյուրանոցում կոնֆլիկտի ժամանակ բռնել եւ քաշել է իր թեւից: Սիմոնյանը պատմել է, որ դեպքը տեղի է ունեցել հյուրանոցում, որտեղ ինքը եղել է նաեւ այլ պատգամավորների հետ: Նրա խոսքով՝ Հայկ Սարգսյանն իրեն հարցրել է՝ կարո՞ղ է իրենց միանալ իր ընտանիքի, հայրիկի ընկերը, ինչից հետո ներս է մտել մի անձ, ում Սիմոնյանը, իր պնդմամբ, այդ պահին չի ճանաչել: Հետագայում, ըստ Սիմոնյանի, պարզվել է, որ նա «շատ հայտնի քրեական հեղինակություն» է: Սակայն Սիմոնյանը մինչեւ վերջ պահեց ինտրիգը՝ չհրապարակելով այն անձի անունը, որը, իր իսկ ձեւակերպմամբ, համարձակվել էր բռնել անկախ երկրի ԱԺ նախագահի թեւից: «Ժողովուրդ» օրաթերթին հաջողվել է պարզել միջադեպի որոշ մանրամասներ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խոսքը մոսկվայաբնակ Նորիկ Թեւանյանի մասին է, որը հայտնի է նաեւ «Ախալքալաքցի Նորո» անունով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ միջադեպը տեղի է ունեցել Մոսկվայի «Արարատ Հայաթ» հյուրանոցի նախասրահում: Այնտեղ նստած Ալեն Սիմոնյանին մոտեցել է Հայկ Սարգսյանը՝ Նորիկ Թեւանյանի հետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ ԷԼ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ ԱՆՑՅԱԼԸ ԽՄԲԱԳՐԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ»

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արման Եղոյանի հետ՝ անդրադառնալով Դաշնակցությանն ու դաշնակցականներին:

- Դուք բավական սուր ելույթ ունեցաք Դաշնակցության վերաբերյալ: Ակնկալելի էր, որ դրան կհետեւեն նաեւ դաշնակցականների արձագանքները: Վերջին շրջանում նրանք հաճախ են պնդում, թե Դուք հայտարարում եք, որ Դաշնակցությունը պետք է փակվի: Միեւնույն ժամանակ, Ձեր նախկին խոսքերից մեջբերում են մի դրվագ, ըստ որի՝ մինչեւ հեղափոխությունը Դուք անգամ մտածել եք Դաշնակցության շարքերն անցնելու մասին: Ի՞նչն էր այն ժամանակ Ձեզ դրդել այդ ուղղությամբ մտածել, եւ ի՞նչն է այսօր ստիպում այդքան կոշտ քննադատել Դաշնակցությանը:

- Այստեղ որեւէ մեծ գաղտնիք չկա: Ես խոսել եմ «մեր միջի դաշնակցականությունը» արմատախիլ անելու մասին: Այդ «մեր»-ի մեջ ես էլ եմ: Այսինքն՝ խոսքը միայն թղթի վրա գրված կանոնադրության կամ կուսակցության մասին չէ: Ես վաղը եւս ելույթ կունենամ եւ ավելի մանրամասն կբացեմ փակագծերը՝ ինչ նկատի ունեմ «դաշնակցականություն» ասելով: Ես նկատի ունեմ, մասնավորապես, անցյալին անընդհատ վերադառնալը եւ անցյալը խմբագրելու փորձերը: Այո՛, ես էլ եմ ունեցել անցյալը խմբագրելու ցանկություն: Կարծում եմ՝ ցանկացած մարդ, եթե հնարավորություն ունենար, կուզենար հետ տալ ժամանակը եւ որոշ բաներ փոխել՝ հատկապես մեր վերջին հարյուր տարվա պատմության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների առումով՝ Ցեղասպանությունից սկսած, դրանից առաջ եւ հետո տեղի ունեցած գործընթացները, Առաջին Հանրապետության կորուստը եւ այլն: Բայց պետք է հասկանալ, որ ժամանակը հետ տալ չենք կարող եւ անցյալի սխալները հիմա ուղղել չենք կարող: Մենք կարող ենք թույլ չտալ նույն սխալները ներկայում: Եթե ուզում ենք պատմական արդարության մասին խոսել՝ դաշնակցականների բառապաշարով, ապա ամենամեծ ուղղումը հենց այն կլինի, որ այսօր չկրկնենք այն սխալները, որոնք թույլ են տրվել 19-րդ դարի վերջին, Բեռլինի Կոնգրեսի ժամանակ, Ցեղասպանության նախօրեին, Առաջին Հանրապետության տարիներին կամ 1990-ականներին Երրորդ Հանրապետության հիմնադրման շրջանում:

- Բայց Ձեր նախկին խոսքերը մեջբերելով՝ ասում են, որ եթե հեղափոխությունը չլիներ եւ Դուք հայտնվեիք այդ ուղղությամբ, հնարավոր է՝ միանայիք Դաշնակցությանը: Դուք ինքներդ խոստովանե՞լ եք, որ այդպիսի ուղղություն ունեցել եք:

- Նախ՝ դա եղել է 2017 թվականից շատ ավելի վաղ՝ պատանեկան կամ երիտասարդական տարիներին, երբ մարդը նոր է ձեւավորում իր ազգային ինքնությունը: Այդ փուլում, որպես անհատ, այո՛, որոշակի չափաբաժնով այդ գաղափարախոսությունը կարող էր կարեւոր լինել իմ ձեւավորման համար: Բայց մարդը չի կարող ամբողջ կյանքում մնալ պատանի: Իմ քննադատությունն այն է, որ նրանք մնացել են քաղաքական պատանիներ: Այն, ինչ մտածում էին 15 տարեկանում, նույն կերպ մտածում են այսօր: 50-60 տարեկան մարդիկ են, նրանց պատանեկությունից տասնամյակներ են անցել: Այս աշխարհում ոչինչ չի՞ փոխվել, մոտեցումներ, կարգուկանոն, քաղաքական իրականություն չկա՞ն: Իսկ հեղափոխությունն այստեղ կապ չունի: Ես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ եմ դրա հիմնադրումից եւ նախաձեռնության անդամ եմ եղել:

- Այսինքն՝ Դուք Ձեր մեջից «դաշնակցականությունը» հանե՞լ եք:

- Այստեղ ճիշտ եք ձեւակերպում հարցը: Երբ ասում եմ՝ պետք է արմատախիլ անել դաշնակցականությունը, խոսքը նաեւ իմ մասին է: Ես փորձում եմ տարբեր հարցերի լուծումներ առաջարկելիս չցուցաբերել դաշնակցականության ոգով պայմանավորված մոտեցումներ: Պետք է անկեղծ ասեմ՝ երբեմն դա հաջողվում է, երբեմն՝ ոչ: Բայց այդ խոսքն ինձ էլ է ուղղված:

- Իշխան Սաղաթելյանն ասաց, որ Ձեր եւ թուրք գեներալի խոսքերը համընկնում են, մասնավորապես՝ Դաշնակցության գործունեության վերաբերյալ Ձեր հայտարարությունների համատեքստում: Այսինքն՝ ըստ նրա՝ Դուք առաջ եք տանում թուրքական կարգախոս:

- Նախ պետք է ճշտել՝ որեւէ թուրք գեներալ նման բան ասել է, թե ոչ: Եթե թուրք գեներալն ասել է, որ մածունը սպիտակ է, իսկ ես էլ ասեմ, որ մածունը սպիտակ է, ի՞նչ է դրանից հետեւում:

Եթե որեւէ թուրք գեներալ ասել է նույնը, դա դեռ չի նշանակում, որ նույն ծագումն ունի այդ տեսակետը: Իշխան Սաղաթելյանի տրամաբանությունն ինձ համար անհասկանալի է: Այսինքն՝ երբ ինքը որեւէ հարցի մասին մտածում է, պետք է նախ ճշտի՝ թուրքերը, ճապոնացիները կամ ավստրալացիները այդ թեմայի վերաբերյալ ի՞նչ են ասել: Դա հենց այն մտածելակերպն է, որը ես անվանում եմ դաշնակցականություն: Հարցը պետք է քննարկել բովանդակային առումով՝ ըստ էության հասկանալով, թե ես ինչ կարծիք ունեմ տվյալ հարցի վերաբերյալ: Թուրք գեներալը կարող է ասել, որ ծխելը վնասակար է: Ես դրա համար սկսե՞մ ծխել, որպեսզի նրա հետ կարծիքս չհամընկնի:

- Բայց եթե խոսույթները համընկնում են, դա կարող է առնվազն հարցեր առաջացնել:

- Նմանությունը չի նշանակում, որ նույն ծագումն ունեն: Կարող է մարդն ասել՝ երկինքը կապույտ է, եւ ես էլ ասել՝ երկինքը կապույտ է: Հետո ի՞նչ:

Թուրք գեներալը կարող է առավոտյան սուրճ խմել, ես էլ կարող եմ առավոտյան սուրճ խմել: Դրա համար ես ժամը ութին չխմե՞մ, որ հանկարծ նույն բանը չանեմ:

Ես ի՞նչ գործ ունեմ թուրք գեներալի հետ: Վրացի գեներալ չկա՞, որ այդ թեմայով ինչ-որ բան է ասել: Պարսիկները ի՞նչ են ասել, այլ երկրների ներկայացուցիչներն ի՞նչ են ասել: Ինչո՞ւ պետք է ամեն հարցում առաջին հերթին նայենք, թե թուրքերը ինչ են մտածում:

Օրինակ՝ երբ Արթուր Խաչատրյանը խոսում էր Բաքվում որեւէ հիշատակի օրվա մասին, տպավորություն էր, որ իրենք շատ լավ անգիր գիտեն թուրքական բոլոր հիշատակի օրերը՝ հանկարծ այդ օրը որեւէ բառ կամ արտահայտություն չասելու համար:

- Ուզում եմ նաեւ ճշտել Ձեր կենսագրության հետ կապված մի հարց: Դուք «Երկիր Մեդիա»-ում աշխատե՞լ եք որեւէ ժամանակահատվածում: Ձեր պատանեկության տարիներին որեւէ կերպ հարե՞լ եք Դաշնակցության գաղափարներին կամ փորձե՞լ եք նրանց հետ աշխատել:

- Եթե «հարել» ասելով նկատի ունեք, որ մարդը կարդում է «Ռանչպարների կանչը» եւ դրանից հուզվում է, ապա դա կարող եք այդպես համարել: Ես երբեք չեմ եղել Դաշնակցություն կուսակցության անդամ, չեմ եղել նաեւ Երիտասարդական միության անդամ եւ որեւէ այլ կառույցի անդամ չեմ եղել: Եվ դա չեմ ասում որպես արդարացում: Եթե լինեի, նույնպես որեւէ խնդիր չէի տեսնի դրանում:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

«ՊԻՆԳ-ՊՈՆԳ»

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Համապարփակ անվտանգություն եւ դիմակայունություն» խորագրով միջազգային համաժողովին հանդես է եկել ելույթով:

«Համապարփակ անվտանգություն կառուցելու ճանապարհին շատ էական է, թե ինչպես ենք մենք մտածում եւ ընկալում հարցերը:

Մեր անվտանգային շատ խնդիրներ, կարող է պարզվել, որ սկսվում են մեր մտքում, իրականության եւ միջավայրի մեր ընկալումների մեջ: Ու այդ խնդիրն այսօր առկա է ՀՀ-ում»,- նշել է Փաշինյանը:

Նա անդրադարձել է նաեւ Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին:

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի բանակցությունների հաջող ավարտը տեղի ունեցավ, երբ մենք «X» պահի որոշեցինք դուրս գալ մեխանիկական փոխադարձության սկզբունքից: Տեսանք, որ կա մի իրավիճակ, որ խաղաղության համաձայնագրի տեքստը «պինգ-պոնգով» ավելի լավը դարձնելու որեւէ պոտենցիալ այլեւս չկա: Եվ մեր առաջ եկավ ընտրություն՝ շարունակել փոխադարձության այդ «պինգ-պոնգը», թե գնալ այլ տրամաբանություն կառուցելու ճանապարհով:

Մենք կայացրինք որոշում, որ համաձայնվում ենք այս տեքստին»:

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԽԱԹԱՐԵԼ

Ադրբեջանի նախագահի օգնական, նախագահի վարչակազմի արտաքին քաղաքականության հարցերով վարչության ղեկավար Հիքմեթ Հաջիեւը հայտարարել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը «դժվարին պայքար է»:

Դուբայում «Եվրոնյուզի» ֆորումի ընթացքում Հաջիեւը նշել է, որ, իր գնահատմամբ, Հայաստանում եւ հայկական սփյուռքում դեռեւս ուժեղ են «ռեւանշիստական ուժերը», որոնք փորձում են խաթարել երկու երկրների միջեւ խաղաղության գործընթացը:

«Հավանաբար, Հայաստանի կառավարությունն ու ղեկավարությունը նույնպես պետք է աշխատեն՝ իրենց ժողովրդին խաղաղությանը նախապատրաստելու ուղղությամբ»,- ասել է Հաջիեւը: Նա հավելել է. «Մենք հաղթեցինք պատերազմում, բայց նաեւ հաղթում ենք խաղաղության մեջ, ինչը դժվարին պայքար է»: Հաջիեւը կրկին անդրադարձել է Ղարաբաղում եւ Զանգեզուրում հայկական կողմի գործողություններին՝ պնդելով, թե օկուպացիայի տարիներին ոչնչացվել են Ադրբեջանի մզկիթներն ու իսլամական մշակութային ժառանգությունը: Այս պնդումները ներկայացրել է որպես Ադրբեջանի պատմական ժառանգության մաս: Միաժամանակ Ադրբեջանի նախագահի օգնականը հայտարարել է, որ Ադրբեջանը պարտավորվում է պահպանել իր տարածքում գտնվող քրիստոնեական ժառանգությունը՝ անկախ դրա պատկանելությունից: Նրա խոսքով՝ քրիստոնեական ժառանգությունը Ադրբեջանի մշակութային ժառանգության մասն է:

«Եվրոնյուզը» նշում է, որ հայկական եկեղեցական իշխանությունները վիճարկել են Ադրբեջանի վերաբերմունքը կրոնական հուշարձանների նկատմամբ՝ Բաքվին մեղադրելով Ղարաբաղում եկեղեցիների ոչնչացման մեջ: Ադրբեջանը մերժում է այդ մեղադրանքները:

Հաջիեւը նաեւ քննադատել է Եվրոպական խորհրդարանին՝ պնդելով, որ դրա որոշումները չեն նպաստում տարածաշրջանային խաղաղության գործընթացին: Նրա խոսքով՝ Եվրամիության քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ պետք է ընդգրկի ամբողջ տարածաշրջանը եւ հիմնված լինի տարածաշրջանի երկրների հետ հավասարակշռված համագործակցության վրա:

Ա. Վ.

ԱՋԱԿՑՈՒՄ Է

Թուրքիան աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի ավարտին հասցնելու ջանքերին, հայտարարել է Թուրքիայի պաշտպանության նախարար Յաշար Գյուլերը: «Հուսով ենք, որ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հնարավորինս շուտ կհաստատվի համապարփակ եւ կայուն խաղաղություն: Թուրքիան աջակցում է գործընթացն այնպիսի մոտեցմամբ ավարտին հասցնելու ջանքերին, որը կամրապնդի տարածաշրջանային կայունությունը եւ կնպաստի տարածաշրջանի բոլոր ժողովուրդների խաղաղությանն ու բարեկեցությանը», - Անկարայում՝ Կովկասյան իսլամական բանակի եւ Բաքվի ազատագրման 108-րդ տարեդարձին նվիրված միջոցառման ժամանակ ասել է Գյուլերը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԻՄՔ Է ՍՏԵՂԾԵԼ

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է՝ Ղարաբաղում Ադրբեջանի տարած հաղթանակը տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական իրողության հիմք է դրել եւ պայմաններ ստեղծել «Զանգեզուրի միջանցքի» իրականացման համար:

Ինչպես գրում է ադրբեջանական APA գործակալությունը, այս մասին Ալիեւը նշել է Թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկրների անվտանգության խորհուրդների քարտուղարների հինգերորդ նիստի մասնակիցներին ուղղված իր ուղերձում: Ալիեւի խոսքով՝ վեց տարի առաջ Ադրբեջանի արձանագրած հաղթանակը Ղարաբաղում, որը նա անվանել է «ընդհանուր հպարտության աղբյուր», հիմք է դրել տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական իրողության ձեւավորման համար:

«Միեւնույն ժամանակ, այս հաղթանակը հիմք ստեղծեց Զանգեզուրի միջանցքի իրականացման համար՝ պատմական երթուղի, որը տնտեսական, լոգիստիկ եւ ռազմավարական առումներով կապում է մեր երկրները»,-ասել է Ադրբեջանի նախագահը:

Նա նաեւ շնորհակալություն է հայտնել Թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկրներին՝ Ադրբեջանի կողմից «օկուպացիայից ազատագրված» տարածքների վերակառուցման եւ վերականգնման գործընթացին աջակցելու համար:

Ալիեւը նշել է, որ այդ նախաձեռնությունները Ադրբեջանի ժողովրդի կողմից ընդունվում են «խոր հարգանքով եւ երախտագիտությամբ»:

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հաստատել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների նոր լայն փաթեթը, որը ներառում է նաեւ ռուսական նավթ եւ գազ գնող երկրների նկատմամբ մինչեւ 100% մաքսատուրքեր սահմանելու հնարավորություն:

«Եվրոնյուզի» փոխանցմամբ՝ օրինագիծը Ներկայացուցիչների պալատում ընդունվել է 262 կողմ, 159 դեմ ձայներով: Ավելի վաղ այն հավանության էր արժանացել նաեւ Սենատում: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ պատրաստվում է ստորագրել այն:

Պատժամիջոցներն ուղղված են Ռուսաստանի էներգետիկ եւ պաշտպանական ոլորտներին, նախագահ Վլադիմիր Պուտինի եւ նրա շրջապատի պաշտոնյաներին, ինչպես նաեւ ռուսական նավթ տեղափոխող «ստվերային նավատորմին»:

Օրինագծի առավել կարեւոր դրույթներից մեկը Չինաստանի եւ Հնդկաստանի նկատմամբ հնարավոր 100% մաքսատուրքերն են, եթե նրանք շարունակեն մեծ ծավալներով ռուսական նավթ եւ գազ գնել: Հնդկաստանը, սակայն, հայտարարել է, որ չի պատրաստվում փոխել իր քաղաքականությունը եւ շարունակելու է ռուսական նավթի գնումները՝ հաշվի առնելով շուկայի զարգացումները:

Ուկրաինայի իշխանությունները ողջունել են օրինագծի ընդունումը՝ այն դիտարկելով որպես Ռուսաստանի նկատմամբ տնտեսական ճնշումն ուժեղացնելու քայլ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՎ Է ՋԱՆԿԱՆՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ինչպես արդեն տեղեկացրել էր ArmLur.am-ը, հոկտեմբերի 25-ին ՏԻՄ ընտրություններ կանցկացվեն նաեւ Արմավիր խոշորացված համայնքում:

2021թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունների ժամանակ Արմավիր խոշորացված համայնքում առաջադրվել էր միայն ՔՊ կուսակցությունը: Վերջինս էլ 99,99%-ով ստանձնեց համայնքի իշխանությունը: 2024 թվականի հունվարին Արմավիրի ավագանին արտահերթ նիստ իրականացրեց, որի արդյունքում 23 կողմ եւ 0 դեմ ձայներով համայնքի ղեկավար ընտրվեց Վարշամ Սարգսյանը:

«Հայբուսակ» համալսարանն ավարտելուց հետո Սարգսյանը 2012 թվականից հետո 6 տարի աշխատել է «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունում: 2018 թվականի հեղափոխությունից հետո հուլիսի 13-ից նշանակվել է Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ, ապա 2021թ. նշանակվել է Արմավիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում, որից հետո 2024 թվականի հունվարի 15-ին Արմավիր համայնքի ավագանու կողմից ընտրվել է Արմավիր համայնքի ղեկավար: Վարշամ Սարգսյանի ունեցվածքին ArmLur.am-ը արդեն անդրադարձել է:

Հիշեցնենք, որ Սարգսյանից առաջ Արմավիրի համայնքապետը Դավիթ Խուդաթյանն էր, ով 2024-ին թողեց պաշտոնը, քանի որ վարչապետի կողմից նշանակվել էր Արմավիրի մարզպետի պաշտոնում: Իսկ վերջերս նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար: Մի քանի օր առաջ Պետրոս Ղազարյանին տված հարցազրույցում Սարգսյանը ամփոփում էր իր երկամյա պաշտոնավարման արդյունքները: Նա նշեց, որ համայնքում դեռ նախընտրական տրամադրություններ չկան, ու եւս մեկ անգամ հաստատեց, որ իր թիմը մասնակցելու է առաջիկա ընտրություններին, որպեսզի «կիսատ մնացած ծրագրերը իրականացնեն»: Սարգսյանը նաեւ ընդունեց մարզային նախընտրական դեբատներին մասնակցելու Պետրոս Ղազարյանի հրավերը:

Առաջիկա ՏԻՄ ընտրությունները ցույց կտան՝ արդյոք Վարշամ Սարգսյանը հասցրել է իր երկամյա պաշտոնավարման ընթացքում ձեռք բերել համայնքի բնակիչների վստահությունը որպես համայնքապետ:

ԱՆՆԱ ՀԱՄԲԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓՈԽԱՆԱԿԵԼ ԵՆ

Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ տեղի է ունեցել զոհված զինծառայողների մարմինների հերթական փոխանակումը:

Ինչպես հայտնում է «ԲելՏԱ»-ն, փոխանակումը տեղի է ունեցել ռուս-ուկրաինական սահմանին՝ ուկրաինա-բելառուսական սահմանային հատվածում:

Փոխանակման շրջանակում Ռուսաստանը Ուկրաինային է փոխանցել 252 զինծառայողի մարմին, իսկ Ուկրաինան Ռուսաստանին՝ 23 զինծառայողի մարմին:

Ընդհանուր առմամբ կողմերը փոխանակել են 275 զոհված զինծառայողների մարմիններ:

ԿԱՐՈՂ Է ԹՇՆԱՄԱԿԱՆ ՔԱՅԼ ԼԻՆԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ եթե Կանադայի՝ Եվրամիության հետ «ասոցացված անդամ» դառնալու վերաբերյալ համաձայնությունը համարի «թշնամական քայլ», ապա Վաշինգտոնը կարող է ԵՄ-ի նկատմամբ բարձր մաքսատուրքեր սահմանել:

Թրամփը նշել է, որ եթե նախաձեռնությունը բարի մտադրություն ունի, խնդիր չկա, սակայն հակառակ դեպքում ԱՄՆ-ը կարող է «շատ բարձր մաքսատուրքեր» սահմանել Եվրոպայի նկատմամբ:

Հայտարարությունը հնչել է այն բանից հետո, երբ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը առաջարկել է Կանադային դառնալ ԵՄ-ի առաջին «ասոցացված անդամը»: Նրա խոսքով՝ ներկայիս աշխարհում անհրաժեշտ է վերանայել գործընկերությունները եւ ամրապնդել համագործակցությունը:

Կանադայի վարչապետ Մարկ Քարնին եւս հայտարարել է, որ իր երկիրը ձգտում է ԵՄ-ի հետ «եզակի դաշինք» ձեւավորել: Քննարկվող համագործակցությունը կարող է ներառել առեւտրային խոչընդոտների նվազեցում, էներգետիկա, պաշտպանություն, կիբերանվտանգություն, արհեստական բանականություն եւ տեխնոլոգիաներ:

Միաժամանակ Կանադայի՝ ԵՄ լիիրավ անդամ դառնալու հարցում աշխարհագրական խոչընդոտ կա. ԵՄ անդամակցության համար երկիրը պետք է լինի եվրոպական, իսկ «ասոցացված անդամության» պաշտոնական կարգավիճակ ներկայում գոյություն չունի:

ԵՄ-ի եւ Կանադայի միջեւ ապրանքների եւ ծառայությունների առեւտուրը նախորդ տարի կազմել է 130.8 միլիարդ եվրո:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՉԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Վրաստանը Իրանի նկատմամբ որեւէ երկկողմ պատժամիջոց չի սահմանում: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն՝ ընդգծելով, որ նման քայլը, իր բնորոշմամբ, «անհեթեթ եւ սխալ» կլիներ:

Կոբախիձեն նշել է, որ Վրաստանը գործում է գործող պատժամիջոցների ռեժիմին լիովին համապատասխան:

«Վրաստանը միշտ հաշվի է առնում տարբեր երկրների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ռեժիմները: Երբ կոնկրետ կառույցներ եւ պետություններ նման պատժամիջոցներ են սահմանում, մենք նույնպես համապատասխան որոշում ենք ընդունում»,- ասել է Վրաստանի վարչապետը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 8-ին ԱՄՆ ֆինանսների նախարարության Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (OFAC) պատժամիջոցների ցանկում ներառել էր իրանական 27 ավիաընկերություն: Դրանց թվում են նաեւ Իրանի եւ Վրաստանի միջեւ չվերթներ իրականացնող ավիափոխադրողներ: Վրաստանի Քաղաքացիական ավիացիայի գործակալությունից հայտարարել էին, որ Թբիլիսին գործելու է գործող պատժամիջոցների ռեժիմին լիովին համապատասխան:

ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ հույս ունի՝ Իրանի դեմ պատերազմը մոտենում է ավարտին: Այդ մասին նա ասել է այն ֆոնին, երբ հակամարտությունը սրվում է նաեւ Եմենում:

Reuters-ի փոխանցմամբ՝ Իրանի աջակցությունը վայելող հութիները հրթիռային եւ անօդաչու հարձակումներ են իրականացրել Սաուդյան Արաբիայի ուղղությամբ, իսկ Սաուդյան ինքնաթիռները հարվածներ են հասցրել Եմենին:

«Հուսանք՝ մենք պատերազմի ավարտին մոտ ենք»,-ասել է Թրամփը: Նա նաեւ նշել է, որ Իրանը ցանկանում է գործարք կնքել՝ հավելելով. «Կտեսնենք, թե ինչպես դա կստացվի»: Միաժամանակ Axios-ը հայտնել է, որ Թրամփը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակում կարող է հանդիպել Պարսից ծոցի երկրների ղեկավարների հետ՝ քննարկելու հակամարտության հետագա ընթացքը: Հակամարտության ընդլայնումը շարունակում է ազդել էներգակիրների շուկայի վրա. Brent տեսակի նավթի գինը հինգշաբթի առավոտյան կազմել է մոտ 104.59 դոլար մեկ բարելի դիմաց:

Ա. Վ.

ԻՆՉ ԿՈՐՈՇԻ

ԾԵԾՈՂՆԵՐԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ԲՈՂՈՔԵԼ

Աժ փոխնախագահ Հայկ Կոնջորյանի եղբորը ծեծի ենթարկողները հրաժարվել են գնալ նախաքննական մարմին եւ ցուցմունք տալ Ավետ Կոնջորյանի դեմ: Դատելով իրավիճակից՝ եթե Աժ փոխնախագահի եղբոր դեմ բողոք չկա, աղա նրա գործողությունների մասով քրեական վարույթը, ըստ ամենայնի, կկարճվի: Ինչ կորոշի Քննչական կոմիտեն՝ դժվար չէ կանխատեսել:

ArmLur.am-ը հայտնել էր, որ Քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Հայկ Կոնջորյանի եղբոր ծեծի քրեական գործով: Ավելին, սեպտեմբերի 12-ին Ավետ Կոնջորյանը՝ որպես տուժող, հրավիրվել էր նախաքննական մարմին եւ ծանուցվել, որ իրեն ծեծի ենթարկելու գործով նախաքննության ավարտ է հայտարարվում:

Հիշեցնենք, որ հուլիսի 24-ի գիշերը Աբովյանում՝ իր տան մոտ, Ավետ Կոնջորյանը ծեծի էր ենթարկվել, ինչի առթիվ քրեական վարույթ էր նախաձեռնվել: Նա Չարենցավանի ավագանու ՔՊ-ական անդամի հետ շինարարական ընկերության շուրջ տարաձայնություններ էր ունեցել, եւ բանը հասել էր նրան, որ Կոնջորյանին ծեծել էին:

Ավելի վաղ «Ժողովուրդ»-ը տեղեկացրել էր, որ նախաքննական մարմինը Ավետ Կոնջորյանին ծեծի ենթարկելու գործով ձերբակալված 5 անձանց ազատ է արձակել: Նրանցից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է բացակայելու արգելքը եւ 2 միլիոն դրամ գրավը:

ՀՀ Քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Կոնջորյանի եղբորը՝ Ավետ Կոնջորյանին, ծեծի ենթարկելու վերաբերյալ քրեական վարույթով 5 մեղադրյալ կա: 5 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործություն կատարելու համար:

Քննչական կոմիտեի հաղորդմամբ՝ մեղադրյալներից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել են բացակայելու արգելքը եւ գրավը, իսկ մյուս մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց դեռեւս չի ընտրվել:

Սակայն պարզվել էր, որ Ավետ Կոնջորյանի ծեծին նախորդել էր մեկ այլ միջադեպ: Հրապարակվել էր տեսանյութ, որում երեւում է, թե ինչպես է Ավետ Կոնջորյանը մեքենայով անցնում գործով մեղադրյալներից մեկի տան մոտով, հայհոյանքներ հնչեցնում եւ, ըստ հրապարակված տեսանյութի, սպառնում՝ օգտագործելով «գյուլել» արտահայտությունը:

Այս ամենի արդյունքում աշխատանքից ազատվեց Չարենցավանի պարեկային ծառայության աշխատակիցը, եւ Ավետ Կոնջորյանի գործողությունների մասով՝ խուլիգանության հատկանիշներով, հարուցվեց քրեական գործ: Դատելով իրավիճակից՝ այս գործը երկար կյանք չի ունենա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԴ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ՝ 39 ՄԼՆ ԴՐԱՄ

Նախորդ օրը Սահմանադրական դատարանը մի քանի ժամում որոշեց, որ Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ԹՐԻՓՓ նախագծի վերաբերյալ շրջանակային համաձայնագրով ստանձնած պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Փաստաթուղթն այժմ կուղարկվի Ազգային ժողով՝ վավերացման: Իսկ արդեն երեկ Կառավարությունը որոշեց 38 մլն 930 հազար 500 դրամ հատկացնել ՍԴ նախագահին, փոխնախագահին եւ մյուս դատավորներին հավելավճարներ վճարելու համար: Ստացվում է ուշագրավ ժամանակագրություն. ՍԴ-ն իշխանության համար կարեւոր միջազգային համաձայնագրին սահմանադրական «կանաչ լույս» է տալիս, իսկ գործադիրը շուրջ 39 մլն դրամ է հատկացնում նույն դատարանի դատավորների հավելավճարներին: Իհարկե, հավելավճարների իրավական հիմքը ստեղծվել է ավելի վաղ, եւ այս երկու որոշումների միջեւ որեւէ ուղղակի կապի մասին փաստ չկա: Բայց դրանց գրեթե զուգահեռ ընդունումը չէր կարող քաղաքական հարցադրումների տեղիք չտալ:

Ինչո՞ւ հենց հիմա, եւ արդյո՞ք Կառավարությունում չեն հաշվարկել, թե ինչ տպավորություն կարող է ստեղծել այս հերթականությունը՝ հատկապես ՍԴ անկախության վերաբերյալ մշտական քննարկումների ֆոնին:

ՎԵՐՑՐԵԼ ԵՆ ԱՏՐՃԱՆԱԿԸ

Սեպտեմբերի 16-ին՝ ժամը 23.35-ի սահմաններում, ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողները գիշերային ծառայություն իրականացնելիս, Զորափի փողոցի ռեստորաններից մեկի մոտ նկատել են վիճաբանող մի խումբ երիտասարդների: Ոստիկանության գվարդիայի ծառայողները ձեռնամարտի հնարք կիրառելով երիտասարդներից մեկի ձեռքից վերցրել են ատրճանակ՝ կանխելով հետագա զարգացումները: Ապօրինի զենք-զինամթերք կրելու եւ պահելու կասկածանքով նշված անձը ձերբակալվել եւ տեղափոխել է Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին: Բաժնում պարզվել է, որ Երեւանի 20-ամյա բնակչի մոտ եղել է 7 փամփուշտով լիցքավորված «Մակարով» տեսակի մարտական ատրճանակ: 20-ամյա երիտասարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԱՊՕՐԻՆԻ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Ջիլ գյուղի 34-ամյա բնակիչը տանը ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 34-ամյա երիտասարդի բնակության հասցեում հայտնաբերվել են «Ֆ-1» տիպի նռնակ՝ պայթուցիչով, կարճեցված փողով հրացան, տարբեր տրամաչափի 96 փամփուշտ, ինչպես նաեւ Երեւանի 32-ամյա բնակչին պատկանող՝ ինքնաձիգի եւ ատրճանակի 34 փամփուշտ, «Ֆ-1» տիպի նռնակ՝ պայթուցիչով, եւ պարկուճներ: Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

«...ՊԵՏՔ Է ՆԱՐԿՈԹԵՍՏ ՀԱՆՁՆԻ»

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության Քաղաքական խորհրդի նախագահ Սուրեն Սուրենյանցը գրում է. «...Բա որ քո հետից գոռան «նարկոշ» կամ «բառիգ» Արթուր

ՔՊ պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը 2017 թվականին, երբ դեռ լրագրող էր աշխատում, անցել է թմրանյութի գործով: Գործը հետագայում կարճվել է, եւ նա քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

2017 թվականի նոյեմբերի 28-ին Հովհաննիսյանը իր Nissan March մեքենայով եւ ուղեւոր Գեւորգ Սավթալյանը բերման են ենթարկվել Քանաքեռ-Զեյթունի ոստիկանության բաժին՝ ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով:

Մեքենայում խուզարկությամբ հայտնաբերվել է 0.24 գրամ դեղնականաչավուն զանգված:

Դեկտեմբերի 5-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով (իրացնելու նպատակով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն):

Տրամաբանական կլինի, որ Նիկոլ Փաշինյանը փորձի պարզել, թե ինչո՞ւ է իր կուսակցության այս պատգամավորի նկատմամբ հարուցված քրգործը կարճվել՝ արդյո՞ք քննիչին կաշառել են, թե՞ «նարկոշության» կամ «բառիգության» վրա բռնված Հովհաննիսյանը «հավաքագրվել» է ոստիկանության կողմից:

Գլոբալ առումով՝ Աժ պատգամավորի թեկնածուին, ի թիվս այլ չափանիշների, օրենսդրորեն պետք է առաջադրվի նաեւ նարկոթեստ հանձնելու պահանջ:

Այդ պարագայում, գուցե Արթուր Հովհաննիսյանի նման պատահականությունները խորհրդարանում չհայտնվեին ու չփորձեին Գագիկ Ծառուկյանին ու այլ հարգարժան մարդկանց պիտակավորելով՝ ինքնահաստատվել:

Չնայած՝ զրոն, արժեք ու արդյունք չստեղծած մարդը ինքնահաստատվել չի կարող, եթե անգամ Փաշինյանի փեշի տակ սողում է:

Ուղղակի, պատգամավորի էս տեսակի մոտ անգամ տարրական ինքնապաշտպանության բնազդը չի աշխատում. եթե նրա ուղեղն անհուսալի «չորացած» չլիներ, հեղինակություն ունեցող մարդկանց մականունով չէր դիմի: Ախր, եթե նրա տրամաբանությամբ շարժվենք, շատերը նրա հետեւից կարող են գոռալ «նարկոշ» կամ «բառիգ» Արթուր:

Ողբերգությունն է էս տեսակին խորհրդարանում հանդուժելը. Նիկոլի փեշի տակից մի օր հայտնվելու եք նույն կարգավիճակում, ինչ ունեցել եք 2017-ին՝ բարոյական բոմժի կագավիճակում»:

ՄԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 16-ին Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում Մյասնիկյան պողոտայում գտնվող սահմանափակ ընկերության տնօրենը հաղորդում է տվել, որ հունիս ամսին ընկերության հաշվապահին է հանձնել 55 միլիոն 500 հազար դրամ եւ 275 հազար դոլար, որպեսզի նա այդ գումարը պահի ընկերության չիրկիզվող պահարաններից մեկում, իսկ երբ սեպտեմբերի 16-ին հաշվապահին խնդրել է, որ նշված գումարից տրամադրի 2 միլիոն դրամ, որպեսզի անց վերջինս հայտնել է, որ անհայտ պայմաններում չիրկիզվող պահարանից գումարը հափշտակել են: ՆԳՆ Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Երեւան քաղաքի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված գողությունը մոր՝ ընկերության հաշվապահի օժանդակությամբ կատարել է Երեւանի բնակիչ 36-ամյա տղամարդը: 65-ամյա կինը եւ 36-ամյա որդին ձերբակալվել եւ տեղափոխվել են Երեւան քաղաքի վարչություն: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հափշտակված գումարը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Սեպտեմբերի 7-ից 14-ը Երեւանում հայտնաբերվել է առանց վարորդական իրավունքի վկայականի 121 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՃԱՄԱՐՏԱԿԵԼ Է

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը սեպտեմբերի 16-ին «Դիլիջան համայնքին տրամադրվել է գյուղատնտեսական նշանակության բեռնատար մեքենա» վերնագրով տեղեկատվական նյութ է հրապարակել, ուր նշված է. «Բարերար Միքայել Վարդանյանի աջակցությամբ Տավուշի մարզի համայնքներին տրամադրվել է 128 մլն դրամ ընդհանուր արժեքով գյուղատնտեսական տեխնիկա եւ բեռնատար մեքենաներ: Դիլիջան համայնքին տրամադրվել է «ՈՒԱԶ» մակնիշի մեկ բեռնատար մեքենա: «Համայնքում հող մշակելը կարող է լինել արդյունավետ, եկամտաբեր եւ ժամանակակից: Եթե տարիներ առաջ գյուղատնտեսությամբ զբաղվելը միայն ապրուստի միջոց էր, ապա այսօր այն կարող է դառնալ լիարժեք եւ կայուն եկամտի աղբյուր»,- նշում է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում բարերար Միքայել Վարդանյանին՝ Տավուշի մարզի համայնքների զարգացմանն ու բնակիչների բարեկեցության ապահովմանն ուղղված աջակցության համար»: Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանն ասել է, որ այսօր գյուղատնտեսությունը կարող է դառնալ լիարժեք եւ կայուն եկամտի աղբյուր: Կարող է, սակայն չի դառնում, որովհետեւ ՔՊ-ական իշխանությունը գյուղատնտեսական երկրում վերացրել է գյուղատնտեսության նախարարությունը, վերացրելէ նախկինում տրվող գյուղատնտեսական անտոկոս վարկերը, գյուղատնտեսության ոլորտում պարտադիր պետական ապահովագրության համակարգ չի գործարկում, գյուղացիներին անհրաժեշտ օգնություն չի ցուցաբերում պարարտանյութերով, բույսերի բուժանյութերով, չի աջակցում գյուղացիական տնտեսությունների աճեցրած բերքի իրացմանը: Դիլիջան խոշորացված համայնքը բաղկացած է Դիլիջան քաղաքից եւ Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք, Խաչարձան գյուղերից: Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական շուկա չկա, որտեղ համայնքի գյուղերի բնակիչները հնարավորություն կունենան իրացնել իրենց աճեցրած բերքը, գյուղատնտեսական մթերքները: Ներկայումս տուրիստական Դիլիջան քաղաքի փողոցներն արեւելյան շուկա են հիշեցնում, ուր գետի վրա, ավտոմեքենաների բեռնախցիկներից գյուղմթերքներ են վաճառում: 2021 թվականի փետրվարի 26-ից Դիլիջան համայնքը ղեկավարող, ՔՊ-ական Դավիթ Սարգսյանը անցած 5,5 տարում այդպես էլ չի լուծել Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական շուկա գործարկելու հարցը: Դիլիջան քաղաքի շատ բնակիչներ համեմատաբար էժան գյուղմթերքներ գնելու նպատակով պարբերաբար մեկնում են Տավուշի մարզկենտրոն Իջեւան, այնտեղի գյուղատնտեսական շուկայում գնում գյուղատնտեսական մթերքներ, ապրանքներ եւ վերադառնում: Գնահատելով Տավուշի մարզի համայնքներին բարերար Միքայել Վարդանյանի կատարած նվիրատվությունը՝ հարցնենք, թե նրա կողմից Դիլիջան համայնքին նվիրաբերած «ՈՒԱԶ» մակնիշի մեկ բեռնատար մեքենան 6 գյուղ ունեցող Դիլիջան համայնքում գյուղատնտեսության զարգացմանը ի՞նչ չափով է զարկ տալու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է հանրությանը ներկայացնել դատավորների հայտարարագրած ունեցվածքը՝ ուսումնասիրելով նրանց գույքը, դրամական միջոցները եւ եկամուտները: Այս հրապարակումների նպատակն է ապահովել դատավորների ունեցվածքի վերաբերյալ տվյալների հանրային հասանելիությունն ու թափանցիկությունը:

Այս անգամ ուսումնասիրել ենք Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Նորա Կարապետյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը: Նորա Կարապետյանը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի ապրիլի 30-ից:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբում եւ տարեվերջին Նորա Կարապետյանի անունով անշարժ գույք առկա չի եղել: Միաժամանակ հայտարարագրում նշված է, որ տարվա ընթացքում նա 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող բնակարանի:

Ավտոմեքենա

Տարվա սկզբում Նորա Կարապետյանի հայտարարագրում առկա է եղել 1980 թվականի արտադրության VAZ մակնիշի ավտոմեքենա, որը նա ձեռք էր բերել 2007 թվականի օգոստոսի 14-ին՝ նվիրատվության եղանակով:

2025 թվականի մարտի 14-ին այդ ավտոմեքենան օտարվել է նվիրատվության եղանակով : Հայտարարագրի տարեվերջյան տվյալներով՝ Նորա Կարապետյանի անունով տրանսպորտային միջոց առկա չի եղել:

Դրամական միջոցներ

Նորա Կարապետյանի բանկային հաշիվների մնացորդները 2025 թվականի սկզբում կազմել են 3,374 եվրո եւ 182,125 դրամ: Տարվա վերջում եվրոյով գումարը հասել է 3,420-ի, իսկ դրամով մնացորդը՝ 262,352 դրամի:

Կանխիկ դրամական միջոցներից տարվա սկզբում նա հայտարարագրել է 12 հազար ԱՄՆ դոլար եւ 14 մլն 580 հազար դրամ: Տարվա վերջին կանխիկ դոլարի չափը կազմել է 15 հազար դոլար, իսկ դրամական միջոցները՝ 14 մլն դրամ:

Եկամուտ

2025 թվականին Նորա Կարապետյանի ընդհանուր եկամուտը կազմել է 16 մլն 43 հազար 629 դրամ: Դրանից 15 մլն 863 հազար 629 դրամը ստացել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմից՝ Դատական դեպարտամենտից, իսկ 180 հազար դրամը՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայից:

Այսպիսով, Նորա Կարապետյանի 2025 թվականի հայտարարագրից երեւում է, որ տարվա ընթացքում նրա անունով անշարժ գույք չի գրանցվել, օտարվել է 1980 թվականի VAZ ավտոմեքենան, իսկ տարվա վերջում բանկային հաշիվներում եւ կանխիկ առկա են եղել դրամական ու արտարժութային միջոցներ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՌԵՐ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառումների մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով մայրաքաղաք Երեւանում նախատեսվում են երթեւեկության սահմանափակումներ:

Սեպտեմբերի 18-ին՝ ժամը 9:00-ից, Հանրապետության հրապարակում երթեւեկությունը մասնակի կսահմանափակվի. տրանսպորտային միջոցների համար փակ կլինի հրապարակի շատրվանների դիմացի հատվածը:

Սեպտեմբերի 21-ին՝ ժամը 8:00-ից մինչեւ սեպտեմբերի 22-ի ժամը 2:00-ն, տրանսպորտային միջոցների մուտքը Հանրապետության հրապարակ եւ դրան հարող մի շարք ճանապարհահատվածներ կսահմանափակվեն:

Մասնավորապես, դեպի Հանրապետության հրապարակ երթեւեկությունը կսահմանափակվի՝ Աբովյան-Թումանյան փողոցների խաչմերուկից, Սախարովի հրապարակից, Պապ թագավորի փողոց-Մաշտոցի պողոտա խաչմերուկից, Տիգրան Մեծի պողոտա-Խանջյան փողոց խաչմերուկից, Վազգեն Սարգսյան Խորենացի փողոցների խաչմերուկից:

Երթեւեկության անվտանգությունն ու միջոցառման անխափան կազմակերպումն ապահովելու նպատակով խնդրում ենք վարորդներին նախապես պլանավորել երթուղիները, շրջանցել նշված ճանապարհահատվածները եւ հետեւել ճանապարհային երթեւեկության կազմակերպման ժամանակավոր սահմանափակումներին:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

Լոռու մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, 2025 թվականի դեկտեմբերի 16-ից՝ Լոռու մարզպետի գրության հիման վրա, մեկնարկել է Վանաձոր համայնքի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վանաձոր համայնքի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգու հողատարածքները 2000-ական թվականների սկզբներին կնքված 25 պայմանագրերով վարձակալության, կառուցապատման կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել են ֆիզիկական ու իրավաբանական 22 անձանց: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վանաձորի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգու տարածքները վարձակալած եւ փաստացի տիրապետող 22 սուբյեկտների կողմից դրանք օգտագործվում են պայմանագրերի խախտումներով ու ոչ նպատակային: Արդյունքում՝ այգին հայտնվել է անբարեկարգ վիճակում:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում, 2026 թվականի օգոստոսի 19-ին շրջել էր նաեւ Հրանտ Մաթեւոսյանի անվան այգում, մի շարք հանձնարարականներ էր տվել մարզի դատախազին:

Լոռու մարզի դատախազությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ 2026 թվականի հունվարի 26-ին միջնորդագիր էր հասցեագրվել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ 22 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ կնքված 26 հողատարածքների վարձակալության, անհատույց օգտագործման եւ կառուցապատման պայմանագրերը լուծելու նպատակով:

Միջնորդագրի արդյունքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ին դադարեցվել է այգու տարածքում՝ Կ.Դեմիրճյան փողոց 25/1Մ-2 հողամաս հասցեում գտնվող՝ 60 քմ մակերեսով, 630 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով եւս 1 հողամասի նկատմամբ ֆիզիկական անձանց կառուցապատման իրավունքը. հողատարածքը վերադարձվել է Վանաձոր համայնքի տիրապետմանը:

Առ այսօր, դատախազական ներգործության արդյունքում, Վանաձոր համայնքի կողմից խզվել են ընդհանուր 12935.3 քմ մակերեսով 20 հողատարածքների վարձակալության եւ անհատույց օգտագործման պայմանագրեր, որոնցից կադաստրային գրանցում են ստացել 14-ը՝ 4092.45 քմ մակերեսով: Մյուս պայմանագրերի լուծման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

● *Մարզերում սեպտեմբերի 7-ից 14-ը հայտնաբերվել է առանց վարորդական իրավունքի վկայականի 362 անձ:*

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՆԱԽԱԳԻԾԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ Կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են 2027 թվականի պետական բյուջեի նախագիծն ու հարկաբյուջետային շրջանակը:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ներկայացրել է 2027-2029թթ. հիմնական մակրոտնտեսական, հարկաբյուջետային ցուցանիշներն ու շրջանակները: Մանրամասներ են ներկայացվել ոլորտային ծախսերի, ռազմավարական նշանակություն ունեցող ծախսային ուղղությունների վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ ՀՀ Կառավարության առաջնահերթություններին, հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումներին:

2027 թ. պետական բյուջեի նախագծի առնչությամբ ծավալվել է մտքերի փոխանակություն, ներկայացվել են տարբեր առաջարկություններ եւ դիտարկումներ:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է բյուջեով նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը:

Վարչապետը շեշտել է՝ բյուջեի եկամտային մասը պետական կառավարման համակարգի բոլոր մարմինների աշխատանքի արդյունքն է եւ ծախսերի արդյունավետությունը կանխորոշում է եկամուտների աճը եւ տնտեսական ակտիվությունը: Այդ համատեքստում՝ երկրի ղեկավարը շեշտել է, որ տնտեսական զարգացումը եւ ստվերի կրճատումը պետք է լինի Կառավարության բոլոր անդամների ուշադրության կենտրոնում:

ՎՍՏԱՀ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ

Հայաստանի հավաքականները վստահ հաղթանակներով են մեկնարկել 2026 թվականի շախմատի համաշխարհային օլիմպիադան: Այս մասին հայտնում է ֆեդերացիան, գրում է shantnews.am-ը: «Տղամարդկանց հավաքականը 4:0 հաշվով առավելության է հասել Բարբադոսի հավաքականի նկատմամբ: Հաղթանակ են տարել գրոսմայստերներ Ռոբերտ Հովհաննիսյանը, Շանթ Սարգսյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Մանուէլ Պետրոսյանը:

Կանանց հավաքականը 3.5:0.5 հաշվով հաղթել է Հոնկոնգի հավաքականին: Հաղթանակ են տարել կանանց գրոսմայստեր Մարիամ Մկրտչյանը, կանանց միջազգային վարպետ Սուսաննա Գաբոյանը եւ Անահիտ Մկրտչյանը: Գրոսմայստեր Էլինա Դանիելյանի խաղն ավարտվել է ոչ-ոքի արդյունքով»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կորել է Սվետլանա Վաղարշակի Ավետիսյանի՝ Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի «Անասնաբուժություն» մասնագիտությամբ 1992 թվականին տրված դիպլոմը:
Դիպլոմի համարը՝ ՓԲ-1 023369
Գրանցման №՝ 88

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Միհրան Խաչատրյանը ազատվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պաշտոնից: Համապատասխան որոշումը վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստորագրել է սեպտեմբերի 3-ին:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Միհրան Խաչատրյանը պաշտոնից հեռանալու կապակցությամբ հրաժեշտի խոսք է հղել Կոմիտեի թիմին եւ գործընկերներին՝ ամփոփելով վերջին տարիներին քաղաքացիական ավիացիայի ոլորտում իրականացված աշխատանքն ու բարեփոխումները: Նրա խոսքով՝ վերջին տարիների հիմնական խնդիրը ոչ թե առանձին թերությունների վերացումն էր, այլ արդյունավետ, կայուն եւ ինստիտուցիոնալ համակարգի ձեւավորումը: Խաչատրյանը նշել է, որ 2020 թվականին ԵՄ-ի կողմից իրականացված գնահատողական այցի ընթացքում արձանագրվել էր, որ Հայաստանի քաղաքացիական ավիացիայի պետական վերահսկողության համակարգը եւ ավիացիոն իշխանության կառուցվածքը չեն համապատասխանել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) պահանջներին:

«Այս տարիների հիմնական խնդիրը, հետեւաբար, ոչ թե առանձին թերությունների վերացումն էր, այլ արդյունավետ, կայուն եւ ինստիտուցիոնալ համակարգի ձեւավորումը»,-նշել է նա: Նրա խոսքով՝ այդ ընթացքում ստեղծվել են երկու նոր ստորաբաժանումներ, վերանայվել եւ փոփոխվել է Կոմիտեի տեսուչների վարձատրության համակարգը, մշակվել, հաստատվել եւ ներդրվել է ավելի քան 30 նոր քաղաքականություն եւ ընթացակարգ: Ներդրվել է նաեւ կոմպետենցիայի վրա հիմնված վերապատրաստումների պլան, համակարգվել եւ փաստաթղթավորվել է վերահսկողության գործընթացը, ձեւավորվել է ներքին որակի կառավարման համակարգ:

Խաչատրյանը նշել է նաեւ, որ մշակվել է «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախագիծ, որով առաջարկվում է ստեղծել ընդհանուր նշանակության ավիացիայի, այդ թվում՝ անօդաչու թռչող համակարգերի եւ VTOL տիպի օդանավերի շահագործման ու վերահսկողության համար անհրաժեշտ իրավական հիմքերը: Նրա խոսքով՝ ընդլայնվել է համագործակցությունը Եվրամիության, ինչպես նաեւ եվրոպական մի շարք երկրների ավիացիոն իշխանությունների հետ: «Այսօր Կոմիտեն ունի միջազգային պահանջներին համապատասխանող կառուցվածք, ձեւավորված մասնագիտական ներուժ, ինչպես նաեւ կառավարման, որակի ապահովման եւ վերահսկողության համակարգ, որը հիմնված է միջազգային չափանիշների եւ պահանջների վրա»,-ասել է Խաչատրյանը: Նա ընդգծել է, որ կատարված աշխատանքի արդյունքները հաստատվել են ICAO-ի կողմից 2024 թվականին իրականացված աուդիտի շրջանակում արձանագրված առաջընթացով եւ ԵՄ-ի կողմից 2025 թվականին իրականացված գնահատողական այցի արդյունքներով: Խաչատրյանը միաժամանակ նշել է, որ ոլորտում դեռեւս շատ անելիքներ կան, սակայն աշխատանքը շարունակվելու է արդեն ձեւավորված համակարգի, կուտակված փորձի եւ նոր մասնագիտական ներուժի հիման վրա:

«Այս արդյունքները մեկ օրվա կամ մեկ անձի աշխատանքի արդյունքը չեն: Դրանք Կոմիտեի ողջ թիմի, ինչպես նաեւ մեր միջազգային գործընկերների հետեւողական եւ համատեղ աշխատանքի արդյունքն են»,-ընդգծել է նա: Միհրան Խաչատրյանը նշել է, որ պաշտոնը թողնելով՝ չի հեռանում ոլորտից եւ պատրաստ է հետագայում եւս իր փորձով ու գիտելիքներով նպաստել Հայաստանի քաղաքացիական ավիացիայի զարգացմանը:

Միհրան Խաչատրյանը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել 2022 թվականի հունիսի 17-ին:

ԼՈՒՐԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ՝ ՎԶԵԲ-Ի ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂ

Ակբա բանկը Հայաստանի ֆոնդային բորսայում կիրականացնի Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի դրամային պարտատոմսերի շուկա ստեղծողի դերը՝ ապահովելով դրանց իրացվելիությունը երկրորդային շուկայում:

Պարտատոմսերը ցուցակվել եւ ընդգրկվել են Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

Պարտատոմսերի հիմնական պայմաններն են.

Թողարկման ընդհանուր ծավալը՝ 5,000,000,000 ՀՀ դրամ

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 10,000,000 ՀՀ դրամ

Քանակը՝ 500 հատ

Շրջանառության ժամկետը՝ 36 ամիս

Արժեկտրոնային եկամտաբերությունը՝ լողացող



Որպես շուկա ստեղծող՝ Ակբա բանկը ֆոնդային բորսայում կապահովի նշված պարտատոմսերի կանոնավոր առք ու վաճառքի հայտերի առկայությունը՝ ներդրողների համար ձեւավորելով բարձր իրացվելիություն եւ թափանցիկ գնագոյացում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

«ՍԵՎԱՆ» ՔԿՀ-Ի ՏԱՐԱԾՔ ԵՆ ՆԵՏԵԼ

ՀՀ արդարադատության նախարարության «Սեւան» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի ծառայողը սեպտեմբերի 15-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, դիտաշտարակում հերթապահություն իրականացնելիս, ահազանգել է այն մասին, որ հիմնարկի քողարկող պատից դուրս նկատել է մարդկային շարժ:

Ահազանգից անմիջապես հետո «Սեւան» քրեակատարողական հիմնարկի ծառայողներն իրականացրել են նշված հատվածի տեղազննություն, որի արդյունքում հայտնաբերել են ներնետված 2 պոլիէթիլենային շիշ՝ կպչուն ժապավենով փաթեթավորված:

Զննությամբ փաթեթներում հայտնաբերվել են բջջային հեռախոս, USB լար, բջջային հեռախոսի լիցքավորիչ եւ պատյան: Դեպքի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

23 ՏԱՐՎԱ ԴԱԴԱՐ

ՄԱԴՈՆՆԱՆ ԿԲԱՑԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Փոփի թագուհի Մադոննան վերադառնում է MTV Video Music Awards-ի բեմ: 68-ամյա երգչուհին կբացի 2026 թվականի մրցանակաբաշխությունը՝ առաջինը ելույթ ունենալով VMA-ի բեմում վերջին 23 տարվա ընթացքում:

MTV-ն եւ CBS-ը հայտնել են, որ Մադոննան ելույթ կունենա սեպտեմբերի 27-ին կայանալիք 2026 թվականի VMAs-ի բացման ժամանակ:

Երգչուհու վերջին կենդանի ելույթը մրցանակաբաշխության ժամանակ տեղի է ունեցել 2003 թվականին, երբ նա բեմ բարձրացավ Բրիթնի Սփիրսի, Քրիստինա Ագիլերայի եւ Միսսի Էլիոթի հետ: Այդ ելույթի ընթացքում Մադոննան ներկայացրեց «Hollywood», «Like a Virgin» եւ «Passenger» երգերից կազմված մեդլին, իսկ բեմում տեղի ունեցած նրա համբույրները Սփիրսի եւ Ագիլերայի հետ դարձան շոուի ամենաքննարկված պահերից մեկը:

23 տարի անց Մադոննան կրկին կվերադառնա VMA-ի բեմ՝ այս անգամ հատկապես կարեւոր տարում: Երգչուհին 2026 թվականի մրցանակաբաշխության առաջատարն է՝ ստանալով 11 անվանակարգ: Դրանց թվում են «Տարվա արտիստ», «Տարվա տեսահոլովակ»՝ *Confessions II - The Film*-ի համար, եւ «Տարվա երգ»՝ Սաբրինա Քարփենթերի հետ կատարած «Bring Your Love» ստեղծագործության համար:

Մադոննան այս տարի հնարավորություն ունի ավելացնելու իր VMA մրցանակների թիվը: Նա արդեն ունի 20 հաղթանակ, ներառյալ 1986 թվականին ստացած Video Vanguard Award-ը:

Երգչուհու պատմությունը MTV VMA-ի հետ սկսվել է դեռեւս մրցանակաբաշխության առաջին տարում՝ 1984 թվականին: Այդ ժամանակ նա բեմ բարձրացավ «Like a Virgin» երգով՝ հսկայական հարսանեկան տորթից դուրս գալով հարսանյաց զգեստով եւ «Boy Toy» գոտիով: Ելույթի ընթացքում նա կորցրեց կոշիկներից մեկը, սակայն այդ բեմադրությունը հետագայում դարձավ VMA-ի պատմության ամենանշանավոր պահերից մեկը:

1986 թվականին Մադոննան դարձավ առաջին կին մենակատարուհին, որն արժանացավ հեղինակավոր Video Vanguard Award-ին: Նա մրցանակաբաշխության բեմ վերադարձավ նաեւ 1989 թվականին՝ բացելով շոուն «Express Yourself» երգով, իսկ 1990-ին ներկայացրեց «Vogue»-ի հայտնի՝ Մարի Անտուանետից ոգեշնչված բեմադրությունը: 1993 թվականին նա հանդես եկավ «Bye Bye Baby» երգով:

2021 թվականին Մադոննան կրկին հայտնվեց VMA-ի բեմում՝ անակնկալ կերպով՝ MTV-ի 40-ամյակի առիթով:

2026 թվականի VMAs-ի հաղորդավարը կլինի Սնուի Դոգը: Մրցանակաբաշխությունը ուղիղ եթերով կանցկացվի Լոս Անջելեսից սեպտեմբերի 27-ին՝ ԱՄՆ արեւելյան ժամանակով 19:30-ից 21:30-ը: Շոուն կհեռարձակվի CBS-ով եւ MTV-ով, ինչպես նաեւ հասանելի կլինի Paramount+-ում ԱՄՆ-ում: Միջազգային լսարանի համար մրցանակաբաշխությունը Paramount+-ում եւ MTV-ում հասանելի կլինի հաջորդ օրը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼՌԱԿՅԱՑ ՇԱՐԺԻՉ

«Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանն ընթացիկ մրցաշրջանում Ա Սերիայում դեռեւս միայն մեկ հանդիպման է մասնակցել՝ ստանալով 6.90 գնահատական: Միեւնույն ժամանակ, միլանյան ակումբը 2026/27 մրցաշրջանը մեկնարկել է աներեւակայելի տեմպով՝ 4 խաղում տոնելով 4 հաղթանակ եւ վաստակելով առավելագույն 12 միավոր: Հունվարին իր 37-ամյակը նշած հայ վետերանը ներկայումս գտնվում է Կրիստիան Կիվուի ռոտացիայի եզրագծին՝ մի ժամանակահատվածում, երբ «Ինտերն» ավելի լավ մարզավիճակում է, քան առաջնության գրեթե ցանկացած այլ թիմ, նշում է armsport-ը:

Իրավիճակը, սակայն, պահանջում է օպերատիվ լուծումներ: «Ռոմայի» դեմ կայանալիք բարդ արտագնա խաղում Հաքան Չալհանօղլուի բացակայության պատճառով Կիվուի ընտրությունը դաշտի կենտրոնում զգալիորեն սահմանափակվում է, իսկ Մխիթարյանի դերը՝ երկրորդականից վերածվում պոտենցիալ վճռորոշի: Նման պրոֆիլի խաղացողը՝ փորձառու, տեխնիկապես գրագետ եւ նվազագույն ֆիզիկական ծախսով խաղը կարդալու ունակությամբ, շատ ավելի արժեքավոր է դառնում հենց այն պահին, երբ թիմի պահեստայինների նստարանի խորությունը փորձության է ենթարկվում:

Արհեստական բանականության կողմից տրված 74/100 ընդհանուր վարկանիշն արտացոլում է այն փաստը, որ Մխիթարյանը շարունակում է չափազանց օգտակար լինել բարձրագույն մակարդակում, անգամ եթե այլեւս այն գերիշխող ուժը չէ, ինչ նախկինում էր: 37 տարեկանում սա ոչ թե քննադատություն է, այլ նրա տված օգուտի հստակ նկարագրություն: Հենրիխը երբեք չի եղել այն տիպիկ «բոքս-թուբոքս» կիսապաշտպանը, որը վիճակագրություն է հավաքում զուտ ֆիզիկական ներկայության հաշվին: Նրա գլխավոր զենքը մշտապես եղել է դիրքային ինտելեկտն ու տեխնիկական հուսալիությունը. որակներ, որոնք տարիքի հետ շատ ավելի լավ են պահպանվում, քան արագությունն ու բարձր պրեսինգը:

Մրցաշրջանի մեկնարկի թվերը վկայում են «Ինտերի» կոլեկտիվ արդյունավետության մասին՝ խփած 13 եւ բաց թողած 6 գնդակ չորս խաղում: Այս պաշտպանական ցուցանիշը հուշում է, որ Կիվուի կառուցած կառույցն անխափան աշխատում է: Այդ հաղթական շարքում Մխիթարյանի միակ հանդիպումը գոլով կամ գոլային փոխանցմամբ չի աչքի ընկել, սակայն վաստակած բարձր բալերը փաստում են, որ նա իդեալականորեն տեղավորվել է լավ կազմակերպված համակարգում՝ չխախտելով թիմային մեխանիզմի աշխատանքը:

Թուրք կիսապաշտպանի բացակայությունը ստեղծում է նոր իրականություն: Առանց Չալհանօղլուի, ով խարսխում է «Ինտերի» կենտրոնը, Կիվուն ստիպված է վերաբաշխել պարտականությունները: Ազատ տարածություններ գտնելու Մխիթարյանի ունակությունը եւ ճնշման տակ գնդակը պահպանելու վարպետությունը նրան դարձնում են հիանալի տարբերակ՝ այդ բեռի մի մասն իր վրա վերցնելու համար, թեեւ «Օլիմպիկոյում» կայանալիք խաղի տակտիկական պահանջները լուրջ փորձություն կլինեն նրա ֆիզիկական հնարավորությունների համար:

Կարիերայի այս փուլում Մխիթարյանն այլեւս այն ֆուտբոլիստը չէ, որի շուրջ «Ինտերը» կառուցում է իր ամբողջ խաղը: Նա այն խաղացողն է, որին օգտագործում են վիրաբուժական ճշգրտությամբ. ռեսուրս, որը պետք է խելամտորեն կառավարել, ոչ թե սպառել: Կիվուի առջեւ ծառացած հարցն այն չէ՝ կարո՞ղ է արդյոք Մխիթարյանը դեռ օգուտ տալ, այլ այն՝ արդյո՞ք տվյալ խաղն ու պահը պահանջում են հենց այն, ինչ առաջարկում է հայ ֆուտբոլիստը: Եւ «Ռոմայի» դեմ խաղում, երբ կազմի ռեսուրսները սուղ են, այս հարցի պատասխանը կարող է միանշանակ «այո» լինել:

ԻՆՉՊԵՍ Է ԱՐՏԱՅՈԼԵԼ

UFC-ի թեթեւ քաշային կարգի հայազգի մարտիկ Արման Ծառուկյանը ներկայացրել է իր այն մարտական շորտերը, որոնցով սեպտեմբերի 19-ին դուրս կգա օկտագոն՝ բրազիլացի Մաուրիսիո Ռուֆիի դեմ սպասված մենամարտում:

ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում կայանալիք UFC 331 մրցաշարին ընդառաջ՝ Ծառուկյանը UFC-ի մամուլի ծառայությանը տված հարցազրույցում ցուցադրել եւ մանրամասնել է, թե ինչպիսի խորհրդանիշներ են տեղ գտել իր նոր՝ հատուկ դիզայնով համազգեստի վրա: «Շատ գեղեցիկ շորտեր են: Դրանք սեւ գույնի են. Արջը՝ որպես Ռուսաստանի խորհրդանիշ, այստեղ հայկական լեռներն են, Հայաստանի դրոշը, Բեթմենի տարբերանշանը... Հիանալի բացառիկ աշխատանք է: Շնորհակալություն UFC-ին, Venom-ին եւ բոլոր նրանց, ովքեր ստեղծել են սա», - նշել է հայ մարտիկը, գրում է armsport-ը:

Հիշեցնենք, որ Արման Ծառուկյանի եւ Մաուրիսիո Ռուֆիի 5-ռաունդանոց հակամարտությունը կլինի սեպտեմբերի 19-ին կայանալիք UFC 331 մրցաշարի երկրորդ գլխավոր իրադարձությունը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳՈԼ

Ամերիկյան «Ինտեր Մայամին» իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց Campeones Cup-ը (Չեմպիոնների գավաթը)՝ սեփական հարկի տակ վստահ հաղթանակ տանելով մեքսիկական «Կրուս Ասուլի» նկատմամբ:

Մայամիի «Նյու Սթեդիում» մարզադաշտում կայացած հանդիպումն ավարտվեց տանտերերի հաղթանակով՝ 2-0 հաշվով: Խաղի 24-րդ րոպեին հաշիվը բացեց արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսին՝ աչքի ընկնելով Լուիս Սուարեսի փոխանցումից հետո: Իսկ 81-րդ րոպեին վերջնական արդյունքը ձեւակերպեց կիսապաշտպան Կազեմիրոն, որը գրավեց մրցակցի դարպասը հենց Մեսսիի կատարած արդյունավետ փոխանցման շնորհիվ:

Այս գնդակը 39-ամյա արգենտինացու համար հոբելյանական՝ 100-րդն էր ֆլորիդյան ակումբի կազմում (բոլոր մրցաշարերի կտրվածքով), եւ 929-րդը՝ պրոֆեսիոնալ կարիերայում: Ընդ որում, Մեսսին սահմանեց MLS-ի նոր բացարձակ ռեկորդ՝ դառնալով լիգայի պատմության մեջ ամենաարագ 100 գոլի հեղինակ դարձած ֆուտբոլիստը: Այս նշագծին հասնելու համար նրան պահանջվեց ընդամենը 115 հանդիպում: Այդ խաղերի ընթացքում նա իր ակտիվում գրանցել է նաեւ 55 արդյունավետ փոխանցում: Ավելին՝ այս վճռորոշ գոլի շնորհիվ Մեսսին պաշտոնական եզրափակիչներում խփած գոլերի ընդհանուր քանակը հասցրեց 36-ի՝ դառնալով համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ եզրափակիչներում ամենաշատ գոլեր խփած ֆուտբոլիստը:

«Կրուս Ասուլի» նկատմամբ տարած հաղթանակի շնորհիվ Մեսսին նաեւ թարմացրեց նվաճած տիտղոսների քանակով համաշխարհային ռեկորդը: Այս գավաթն աստղային հարձակվողի համար 49-րդն էր կարիերայում: Նա այժմ չորս տիտղոսով է գերազանցում այս ցուցանիշով երկրորդ տեղը զբաղեցնող բրազիլացի Դանի Ալվեսին:

Հիշեցնենք, որ Campeones Cup-ը ամենամյա մեկ խաղից բաղկացած մրցաշար է, որն անցկացվում է 2018 թվականից: Տիտղոսը վիճարկում են ամերիկյան MLS-ի գործող չեմպիոնն ու մեքսիկական Liga MX-ի «Չեմպիոնների չեմպիոն» գավաթակիրը: Նախորդ տարի այս մրցաշարում հաղթել էր մեքսիկական «Տոլուկան»:

Հավելենք, որ Մեսսին «Ինտեր Մայամիի» գույները պաշտպանում է 2023 թվականի ամռանից: Կողմերի միջեւ գործող աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մինչեւ 2028 թվականի դեկտեմբերի վերջը, իսկ ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը ներկայումս գնահատվում է 15 միլիոն եվրո, գրում է armsport-ը:

● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 20-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Գայանե» բալետը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Սովորողը բնություններին չներկայանալու դեպքում ինչպե՞ս կարող է հետագայում այն վերահանձնել:

Կիմա Գրիգորյան, 53 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. 4-րդ դասարանի ավարտին 1-4-րդ դասարաններում սովորողի տարեկան բնութագրերի հիման վրա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ինքնաշխատ եղանակով իրականացվում է ատեստավորում: 4-րդ դասարանի այն սովորողը, որը տարեվերջյան ամփոփման արդյունքում հանրակրթության պետական չափորոշչով սահմանված՝ կրթական առաջին աստիճանի ակնկալվող վերջնարդյունքների՝ առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունի, փոխադրվում է 5-րդ դասարան եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ընթացքում ընդգրկվում է երկարօրյա խմբում՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանի:

9-րդ դասարանի սովորողն ավարտական քննությանը չմասնակցելու դեպքում վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կողմից: Վերաքննությունների արդյունքները կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրվում են ոչ ուշ, քան օգոստոսի 30-ը:

5-12-րդ դասարանների սովորողն առնվազն մեկ ուսումնական առարկայից տարեկան 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) միավոր գնահատված լինելու դեպքում վերաքննություն է հանձնում հուլիսի 2-8-ը, իսկ մասնակցության անհնարինության կամ մասնակցելու եւ 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) միավոր գնահատված լինելու դեպքում՝ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են հաստատության համապատասխան մեթոդական միավորումների կողմից: Վերաքննությունների արդյունքները կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրվում են ոչ ուշ, քան օգոստոսի 30-ը: Վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն երկու առարկայից 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) միավոր ստանալու դեպքում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան (12-րդ դասարանի սովորողը չի ավարտում հաստատությունը) եւ կրկնում է տվյալ տարվա դասընթացը:

12-րդ դասարանի սովորողը չի ավարտում հաստատությունը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն երկու ուսումնական առարկայից ստացել է 1-3 (գնահատման 10 միավորային սանդղակից) կամ առնվազն երկու ուսումնական առարկայի պետական ավարտական քննություններից 1-7 (գնահատման 20 միավորային սանդղակից) միավոր կամ չի մասնակցել վերաքննություններին:

ՀՀ ԿԳՄՄՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է՝ ինչ է նշանակում, որ ՀՀ Կենտրոնական բանկն անկախ է:

Կարեն Ասրյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենտրոնական բանկի անկախությունը կարեւոր ինստիտուցիոնալ նախապայման է գների կայունությունը պահպանելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենտրոնական բանկերի գործառնական անկախությունը նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վստահելիությանը՝ միաժամանակ ուժեղացնելով շուկայի արձագանքը կենտրոնական բանկի ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ուղղակի կապ կենտրոնական բանկի անկախության եւ ցածր գնաճի միջեւ (Cukierman A., Central Bank Strategy, Credibility and Independence, Theory and Evidence, MIT press, 1998):

Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով կենտրոնական բանկի անկախության երեք աստիճան կա.

նպատակի անկախություն
թիրախի սահմանման անկախություն
գործառնական անկախություն

Նպատակի անկախությունը (նպատակի սահմանումը) անկախության ամենաբարձր աստիճանն է, որը շնորհվում է, օրինակ, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգին: Սակայն, հիմնվելով տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների վրա, Դաշնային պահուստային համակարգը կարող է փոխել նպատակը: Հայաստանի դեպքում Կենտրոնական Բանկին չի տրվում անկախության այդպիսի աստիճան. Կենտրոնական Բանկի հիմնական նպատակը սահմանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Կենտրոնական Բանկի մասին օրենքով: Հայաստանում թիրախային ցուցանիշի սահմանման անկախությունը նախատեսված է Բյուջեի մասին օրենքով: Գործառնական անկախությունը ենթադրում է, որ կենտրոնական բանկը կարող է անկախ օգտագործել իր գործիքները՝ վերջնական նպատակին հասնելու համար: Հայաստանի Կենտրոնական Բանկն ունի գործառնական անկախություն, եւ դա շնորհված չէ բոլոր երկրների կենտրոնական բանկերին: Օրինակ՝ Անգլիայի Բանկը, որը մինչեւ 1998 թվականը գործիքների օգտագործման անկախություն չուներ, եւ միջամտելու իրավասություն տրված էր գործադիր իշխանությանը:

ՀՀ Կենտրոնական բանկ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Եղվարդ-Ջովունի ճանապարհին բախվել են հինգ ավտոմեքենաներ, որոնցից երկուսը՝ բեռնատար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 11 + 24 + 29
Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 17 + 30 + 32
Գեղարքունիք	+ 6 + 11 + 24 + 28
Լոռի	+ 7 + 12 + 24 + 28
Տավուշ	+ 8 + 12 + 25 + 28
Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 13 + 17 + 30 + 34

Արարատ	+ 13 + 17 + 32 + 34
Արմավիր	+ 11 + 16 + 32 + 34
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 31 + 34
Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 22 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 27 + 30
Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 33 + 35
Երեւան	+ 17 + 19 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*